ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մայիսի 2026 թվականի N 713 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱ-ԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 355-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին և 4.2-րդ կետերով.

«4.1. Ծրագրի շրջանակում յուրաքանչյուր շահառու իրավունք ունի մեկ անգամ գործող վարկային կամ լիզինգային պարտավորությունը մեկ ֆինանսական կազմակերպությունից այլ ֆինանսական կազմակերպություն տեղափոխելու (վերաֆինանսավորելու): Պարտավորության տեղափոխման դեպքում պետական սուբսիդավորումը շարունակվում է սույն ծրագրով սահմանված պայմաններով՝ առանց սուբսիդավորման ընդհանուր ժամկետի երկարաձգման:

4.2. Ֆինանսական կազմակերպությունները պարտավոր են ապահովել տեղափոխվող վարկի կամ լիզինգի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության և փաստաթղթերի, այդ թվում՝ վարկային կամ լիզինգային պայմանագրի և դրա փոփոխությունների, պարտավորության մնացորդի, վճարումների պատմության, ապահովման միջոցների և պետական աջակցության վերաբերյալ տվյալների փոխանակումը: Սույն կետով նախատեսված տեղեկատվության և փաստաթղթերի փոխանակումն իրականացվում է համապատասխան դիմումն ստանալու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ էլեկտրոնային եղանակով, եթե ֆինանսական կազմակերպությունների միջև համաձայնությամբ այլ կարգ սահմանված չէ:».

2) 5-րդ կետի 4-րդ ենթակետի վերջում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

3) 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) «Զբոսաշրջության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված հյուրանոցային տնտեսության օբյեկտների կառուցման կամ վերակառուցման նպատակով Հայաստանի Հանրապետության մարզերում (բացառությամբ Երևան քաղաքի) իրականացվող կապիտալ շինարարություն՝ ավելացված արժեքի հարկ վճարող կապալառու կազմակերպության ներգրավմամբ, պայմանով, որ ներդրումային նախագիծը համապատասխանում է նշված օրենքով և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված նվազագույն պահանջներին ու չափորոշիչներին, ինչպես նաև զբոսաշրջության զարգացման պետական քաղաքականության առաջնահերթություններին:».

4) 6-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. սուբսիդավորում՝ մինչև 42 ամիս՝ բացառությամբ սույն ծրագրի 5-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված դեպքերի, որոնց համար վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման ժամկետը սահմանվում է մինչև 36 ամիս:».

5) 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին և 6.2-րդ կետերով.

«6.1. «Սույն հավելվածի 5-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված նպատակով տրամադրվող վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտերի դեպքում ֆինանսական կազմակերպությունը հայտը՝ կից ներդրումային նախագծով և դրա գնահատման համար հիմք հանդիսացող փաստաթղթերով, ներկայացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե (այսուհետ՝ կոմիտե)՝ սույն ծրագրի պահանջներին, «Զբոսաշրջության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նվազագույն պահանջ-ներին ու չափորոշիչներին, ինչպես նաև զբոսաշրջության զարգացման պետական քաղաքականության առաջնահերթություններին համապատասխանության մասնա-գիտական գնահատման նպատակով:

6.2. Կոմիտեն հայտն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է մասնագիտական եզրակացություն: Հայտի վերաբերյալ որոշումը ֆինանսական կազմակերպությունն ընդունում է՝ հիմք ընդունելով իր կողմից իրականացված ֆինանսատնտեսական գնահատման արդյունքները և կոմիտեի մասնագիտական եզրակացությունը:».

6) 9-րդ և 10-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Հայաստանի Հանրապետության դրամով վարկի/լիզինգի սուբսիդավորման չափերը, կախված նպատակից, հետևյալն են.

Աղյուսակ 1

Նպատակը	Սուբսիդավորման չափը
Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի վարկ	6%
Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի լիզինգ	8%
Կապիտալ շինարարության վարկ	6%
Կապիտալ շինարարության լիզինգ	8%
Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման վարկ: Արտադրողականության խորհրդատվության վարկ	6%
Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման լիզինգ: Արտադրողականության խորհրդատվության լիզինգ	8%

Հայաստանի Հանրապետության մարզերում (բացառությամբ Երևան քաղաքի) հյուրանոցային տնտեսության օբյեկտների կառուցման կամ վերակառուցման նպատակով տրամադրվող վարկ	8%

10. Արտարժույթով վարկի/լիզինգի սուբսիդավորման չափերը, կախված նպատակից, հետևյալն են՝

Աղյուսակ 2

Նպատակը	Սուբսիդավորման չափը
Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի վարկ	4 %
Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի լիզինգ	6 %
Կապիտալ շինարարության վարկ	4 %
Կապիտալ շինարարության լիզինգ	6 %
Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման վարկ: Արտադրողականության խորհրդատվության վարկ	4 %
Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման լիզինգ: Արտադրողականության խորհրդատվության լիզինգ	6 %
Հայաստանի Հանրապետության մարզերում (բացառությամբ Երևան քաղաքի) հյուրանոցային տնտեսության օբյեկտների կառուցման կամ վերակառուցման նպատակով տրամադրվող վարկ	*6 %*

».

7) 15-րդ կետի աղյուսակում «D (ԴԻ) «ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» բառերը փոխարինել «D (ԴԻ) «ԷԼԵԿՏՐԱ-ԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» (բացառությամբ 35.11.5 «Էլեկտրաէներգիայի արտադրություն արևային էլեկտրա-կայաններում»)» բառերով.

8) 15-րդ կետի աղյուսակի «Գործունեության նպատակ» սյունակը «D (ԴԻ) «ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

Ե (Ի) 38.2-38.3 «ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՈՉՆՉԱՑՈՒՄ, ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն

».

9) 22-րդ կետի 1-ին ենթակետում «2023 թվականի տարեկան ծավալի» բառերը փոխարինել «նախորդ տարվա» բառերով:

2. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված պայմանագրերի շրջանակներում տրամադրված, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների կողմից հաստատված, սակայն դեռևս չտրամադրված վարկերի և լիզինգների սպասարկումն իրականացվում է դրանց հաստատման պահին գործող պայմաններով և կարգավորումներով:

3. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը ներկայացված, սակայն սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին դեռևս չհաստատված հայտերի նկատմամբ կիրառվում են սույն որոշմամբ սահմանված դրույթները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

21.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ